

Հայ - լեհական միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-լեհական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2010թ. մարտի 12-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության վերաբերյալ» Համաձայնագրի: Հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 2010թ. հուլիսի 13-ին՝ Երևանում:

2011թ. հուլիսի 7-8-ին Վարշավայում տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության հարցերով հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստը, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի և Լեհաստանի միջև առևտրատնտեսական, ֆինանսական, ներդրումային, գյուղատնտեսության, առողջապահության և մաքսային ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները և հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի և Լեհաստանի միջև միջմարզային կապերի խորացմանն առնչվող խնդիրներ: Նիստի շրջանակներում մեծ ուշադրություն է դարձվել նաև ԵՄ-ի հետ համագործակցության ծրագրերին, մասնավորապես՝ Արևելյան Գործընկերության նախաձեռնության ծրագրերի իրականացմանն ակտիվացմանն առումով:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում քննարկվել են նաև Լեհաստանի Հանրապետության Նախագահ Բրոնիսլավ Կոմարովսկու՝ Հայաստան կատարվելիք պաշտոնական այցի նախապատրաստմանն առնչվող հարցեր:

Նիստի ընթացքում նախաստորագրվել է «ՀՀ կառավարության և ԼՀ կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Համաձայնագիրը:

Նիստի արդյունքում ստորագրվել է Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստի Արձանագրությունը:

Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստի շրջանակներում տեղի է ունեցել նաև հայ-լեհական Տնտեսական համաժողով, որի ընթացքում լեհ գործարար շրջանակների ներկայացուցիչներին ներկայացվեցին Հայաստանի ներդրումային հնարավորությունները և գործարար միջավայրը: Նշված համաժողովին ակտիվորեն մասնակցել են Լեհաստանում գործունեություն ծավալող հայ գործարարներ:

Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներն են.

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը՝ հայկական կողմից,

ԼՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մարցին Կորոլեցը՝ լեհական կողմից: